



ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՁԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
գիտական խորհրդի երաշխավորմամբ*

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱԴԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր (գիտական
Ա 597 հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչապրյան

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԼՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ..... 9

Սվեդրյանա Հարությունյան

ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրյան

ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԻՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան

ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ..... 42

Էլենորա Զաքարյան, Մարինե Միքայելյան

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան

ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ61

Մանե Տոնոյան

ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան

ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրյան

ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ..... 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվեդրյանա Հարությունյան

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ113

Լիլիթ Ավերիսյան, Սոնա Մանուսյան

ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ
ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՈՒՄ 128

Քնարիկ Առաքելյան

ԱՆՁԻ ՁՈՎԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ..... 145

Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ
ՇՐՋԱՆՈՒՄ..... 153

Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԸՄԲՈՆՈՒՄԸ..... 179

Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՅՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈՂՄՈՒՆՔՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ..... 193

Ասպրիկ Սերոբյան

ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՌԻՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ..... 210

Անուշ Մկրտչյան

ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ
ԱՍՊԵԿՏՆԵՐԸ..... 227

Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան

ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան

ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ
ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257

Նարինե Աղամյան, Իրինա Խանամիրյան

ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ
ԱՐԺԵՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 263

Կարինե Գրիգորյան

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ

Սոնա Մանուսյան

«Մեր օրերում մշակույթի հարցերը, կարծես, զգայուն նյարդի են դիպչում. դրանք միանգամայն սահուն վերածվում են ինքնության ցավոտ հարցերի»:

Ռենատ Ռոզալդո, «Մշակույթ և ճշմարտություն»

Ինքնության հասկացությունն այսօր քննարկման անբաժան, եթե ոչ՝ հիմնական մաս է ոչ միայն անձ և փոքր խմբեր, այլև հանրություններ և ազգեր բնութագրելիս: Ազգային ինքնությունների վերաբերյալ լայնորեն գործածվում են պահպանման խնդիր, անցումայնություն, գլոբալացման ազդեցություն, կառուցում, վերարժևորում հասկացությունները: Միևնույն ժամանակ, քիչ է խոսվում և հետազոտվում, թե ինչպիսին է, ինչ բովանդակություն ունի այսօրվա կառուցվող, վերարժևորված կամ ճգնաժամային ինքնությունը հոգեբանական տեսանկյունից: Ասվածը բնորոշ է, մասնավորապես, հայկական ինքնության վերաբերյալ պատկերացումներին. դրանք հիմնականում խիստ ընդհանրական են ու դեկլարատիվ, դրանցում հաշվի չեն առնվում ազգային հանրության բազմաշերտ, անհամասեռ լինելը, ինչպես նաև այն կոնկրետ հոգեբանական մեխանիզմները, որոնցով անձն ապրում, պահպանում կամ վերանայում է իր էթնոմշակութային պատկանելությունը: Այս հոդվածով նպատակ ունենք վերլուծել և համակարգել ազգային ինքնության էմպիրիկ հետազոտման տեսական հիմքերը հոգեբանության մեջ:

Ազգային ինքնության հիմնախնդիրը սոցիալական գիտություններում

Էթնոս և ազգ, էթնիկական և ազգային ինքնություն

Ազգային, էթնիկական, մշակութային և ցանկացած այլ կոլեկտիվ ինքնության վերաբերյալ մոտեցումները կախված են հենց ազգ, էթնոս, մշակույթ հասկացությունների հայեցակարգային ըմբռնումից: Ազգային ինքնությունն ընդունված է տարբերակել էթնիկական ինքնությունից, քանի որ ազգ և էթնոս կատեգորիաները ևս նույնական չեն: Ամենաընդհանուր գծերով կարելի է ասել, որ էթնիկականի մասին խոսելիս առավելապես շեշտվում են ծագման, արխաիկության, անցյալի, արմատների և մշակութային-ավանդականի հարցերը, իսկ ազգային ոլորտն արդեն ենթադրում է պետականություն,

ընդհանուր տարածք և ազգայնական գաղափարախոսության առկայություն, ինչպես նաև որոշակի նորմերով կարգավորվող քաղաքացիական հանրությանը պատկանելություն: Ազգային ինքնությունն ընդգրկում է էթնիկական ինքնության բնութագրերը, սակայն չի հանգեցվում դրան և հանդես է գալիս էթնոմշակութային ու պետական-քաղաքացիական ասպեկտների ամբողջությամբ: Ի տարբերություն էթնիկական ինքնության՝ այն համարվում է կազմակերպվածության որոշակի աստիճան ունեցող ազգային հանրություններին բնորոշ: Էթնիկականի և ազգայինի նույնական չլինելը հասկանալի է դառնում ազգ-պետություն չունեցող բազմաթիվ էթնոսների (օրինակ՝ գնչուներ) օրինակով: Ինչևէ, այս իմաստային տարբերակումը բացարձակ կարգավիճակ չունի, և ժամանակակից հանրություններում ինքնության պրոցեսներ ուսումնասիրելիս գործ ունենք երկու ոլորտի հետ միաժամանակ: Կարող ենք, հետևաբար, օգտագործել *էթնոազգային ինքնություն* կամ արդեն իսկ էթնիկականի իմաստն իր մեջ պարունակող՝ *ազգային ինքնություն* եզրը: Էթնիկական ինքնության քննարկումը հաճախ զուգադրվում է նաև մշակութային ինքնության հետ, քանի որ էթնոսը և մշակույթը փոխկապված հասկացություններ են: Շատ ուսումնասիրողներ նախընտրում են կիրառել *էթնոմշակութային ինքնություն* տարբերակը: Իհարկե, այստեղ ևս համընկնումը միայն մասնակի է. նախ՝ մշակութային ինքնությունը ներառում է նաև սեռի/գենդերի, կրոնական հավատքի և այլ բաղադրիչներ, և, բացի այդ, անձն իր անհատական ուղով կարող է հեռանալ իր ծագման էթնոսի մշակույթից՝ միաժամանակ ձևավորելով մեկ այլ մշակույթի պատկանելության ամուր զգացում:

Էթնիկականի և քաղաքացիականի առնչությունը արևմուտք-արևելք դիստոմիայի շրջանակներում

Միջմշակութային հաղորդակցության, ինչպես նաև ազգայնականության ուսումնասիրությունների համատեքստում էթնոմշակութային ինքնությունը (ethnic identity, ethno-cultural identity) դիտարկվում է որպես տարբերության վրա հիմնված, հետևաբար՝ կոնֆլիկտի պոտենցիալ պարունակող, բաժանարար ուժ ժամանակակից, հատկապես՝ բազմէթնիկ հասարակություններում: Այն հակադիր համեմատման մեջ է դրվում ավելի մեծ ընդհանրության զգացում և փոխադարձ ընդունում ապահովող՝ քաղաքացիական կամ արևմտյան տիպի ինքնության հետ: Առհասարակ, ազգերի և ազգայնականության ուսումնասիրություններում քաղաքացիական և էթնիկական տիպերի տարբերակումը շարունակում է մնալ ամենատարածված մոտեցումներից մեկը: Այս բաժանմանը լծորդված է արևմուտք-արևելք բաժանումը՝ այսպիսով Արևմտյան Եվրոպայի երկրները և ԱՄՆ-ը դիտարկելով որպես քաղաքացիական, իսկ Գերմանիան

և Արևելյան Եվրոպան (այդ թվում՝ հետխորհրդային տարածքը), ինչպես նաև Եվրասիական երկրները՝ որպես էթնիկական հիմքի վրա կառուցված ազգեր [22, 15]: Այս տրամաբանության մեջ առանձնացվում է նաև ազգի «ներառական» (inclusive) կոնցեպտ՝ հիմնված քաղաքացիության և տարածքի ընդհանրության վրա (եթե ընդունում ես քաղաքացիական նորմերը, միացիր) և բացառման սկզբունքով (եթե ծագումով մեզ նման չես, չենք ընդունում) կառուցվող ազգային կոնցեպտ՝ հիմնված ընդհանուր ծագման և էթնիկության վրա [22]: Ազգայնականության հայտնի ուսումնասիրող է. Սմիթի արևմտյան կամ քաղաքացիական ազգի մոդելում ազգային միասնությունը հիմնվում է պատմականորեն ընդհանուր տարածքի, օրենքների և ինստիտուտների, քաղաքացիների իրավաքաղաքական հավասարության, քաղաքացիական մշակույթի և գաղափարախոսության ընդհանրության վրա, իսկ «ոչ արևմտյան» էթնիկական ազգը հիմնված է ծագման կամ ենթադրյալ ծագման վրա՝ այդպիսով իր անդամների կողմից ընկալվելով որպես «երևակայական մեծ ընտանիք»: Ընդունելով, որ ցանկացած ազգայնականություն այս կամ այն համամասնությամբ և ձևով ներառում է և՛ քաղաքացիական, և՛ էթնիկ տարրեր՝ է. Սմիթը, այնուհանդերձ, քաղաքացիական/էթնիկական բաժանումը վալիդ և օգտակար էր համարում [մեջբերված ըստ 15]:

Կարելի է ասել, որ ազգության արևմտյան կոնցեպցիան անուղակիորեն քաղաքացիական ինքնությունն էթնիկականից վեր է դնում և պարունակում է լատենտ բացասական գնահատական իրենց ինքնավարության և ազգային ինքնության համար պայքարող փոքր ազգերի հավակնություններին: Վերջին շրջանում ազգային ինքնության արևելք-արևմուտք դիխոտոմիան քննադատվում է հենց գնահատողական լինելու և չափանիշների միակողմանիության համար [15]: Ներկայումս միտում կա ավելի շատ խոսել ազգային ինքնությունների բարդ և բազմամակարդակ լինելու մասին, որոնք այս կամ այն հարաբերակցությամբ ներառում են և՛ քաղաքացիական, և՛ էթնիկական բաղադրիչներ: Հատկապես դժվար է լինում ազգային ինքնությունը երկու տիպերից որևէ մեկին դասակարգել սխյուռք ունեցող ազգերի (այդ թվում՝ հայերի) դեպքում, որը, մի կողմից, չափազանց բազմատարր է՝ էթնիկ համարվելու համար, մյուս կողմից՝ «չտեղակայված»՝ քաղաքացիական համարվելու համար: Այսպիսով, մոտեցումները հետզհետե տիպաբանությունից անցում են կատարում կառուցվածքային վերլուծությունների:

Վերը քննարկված ազգային ինքնության վերլուծությունները հիմնականում աշխարհաքաղաքական ուղղվածություն ունեն, սակայն դրանք կարող են հաշվի առնվել ազգի հոգեբանական վերլուծություններում:

Ազգային ինքնություն, ազգակերպում և դիսկուրս

Եթե նախկինում, իսկ ավելի կոնկրետ՝ մինչև 1980-ականների վերջը, էթնիկ-ազգային ուսումնասիրություններն առավելապես սևեռված էին արմատների, պատմության, ձևավորման, այլ կերպ ասած՝ անցյալի չափման հարցերի վրա, ապա ներկայումս դրանք արդեն ներկայի և ապագայի առանցքի վրա են տեղավորված: Ուշադրության առարկա են այն գործընթացները և երևույթները, որոնք ցույց են տալիս տվյալ ազգային հանրույթի միտումները, նպատակ-պատկերացումները, ինքնաձևակերպումը: Հետպոզիտիվիստական ռեալիզմի դիրքերից ենթադրվում է, որ մեր բոլոր գիտելիք-պնդումները թե՛ արտաքին աշխարհի, թե՛ մեր ներքին ես-ի մասին, ներառյալ պնդումները մեր փորձի, հիշողության և ինքնության (այդ թվում՝ խմբային) մասին, կառուցվում են դիսկուրսիվ, խոսքային միջոցներով [3, 6]: Ազգի կոնստրուկտիվիստական հայտնի ըմբռնումներից մեկն առաջադրել է Բ. Անդերսոնը, որը ներմուծեց *պատկերացված համայնք* (imagined community) կոնցեպտը՝ ցույց տալու համար, որ ազգը հանրություն է, որ զանազան հնարներով (ազգային գաղափարախոսություն, ՋԼՄ ևն) սոցիալապես կառուցվում և ապա պատկերացվում է մարդկանց կողմից, ովքեր իրենց ընկալում են որպես այդ խմբի մաս [1]: Բ. Անդերսոնի համար ազգը պատկերացված հանրություն է այն իմաստով, որ բնական խումբ չէ՝ հիմնված իր անդամների ամենօրյա անձնական փոխգործողության վրա: Փոխարենը՝ անդամներն իրենց մտքում ունեն միմյանց մերձության մասին մենթալ պատկերը: Անդերսոնը հանրության «ազգայնացման» մեծ մեծ դեր է տալիս տպագիր ՋԼՄ-ին, որով քաղաքական և մտավորական էլիտան «աշխատում է մարդկանց հետ» [նույն տեղում]: Հոբսբաումը դիտարկում է հաղորդակցման դիսկուրսիվ ցանցերի, ծիսականացված գործողությունների ու խորհրդանշական համակարգի դերն ազգային հանրությունների կերտման մեջ: Նրա համար ազգ հասկանալը նշանակում է հասկանալ այդ ստեղծվող կամ «հնարվող» ավանդույթների (invented traditions) գեներալը և ֆունկցիան [30]: Այսպիսով, ազգը դիտարկվում է որպես նոր ժամանակի *տեքստ*, որը պետք է դեկոնստրուկցիայի ենթարկել և մեկնաբանել: Կոնստրուկտիվիստական ոգով ազգի վերլուծությունները բազմաթիվ են, դրանց մեծ մասը, եթե ոչ բոլորը, ազգակերտման (nation-building) մասին խոսելիս շեշտադրում է ազգային ինքնության կառուցման (identity construction) ասպեկտը: Հրապուրվածությունն ազգայինի սուբյեկտիվության, փոփոխելիության գաղափարներով հասնում է նրան, որ անտեսվում են ազգերի զոյացման և ինքնագիտակցության բնական, պատմական տարբերությունները, նրանց ներքին հոգեբանական կյանքի առանձնահատկությունները և այն հանգամանքը, որ կամայական էթնոմշակութային հիմքից կամայական ազգային ինքնություն չի կարող կերտվել: Կարճ ասած՝ բացակայում է այն հարցը, թե ինչու է այս կամ այն ազգը ձևակերպում

կամ պատկերացնում իրեն հենց այսպես և ոչ՝ այլ կերպ: Քիչ է քննարկվում նաև այն, թե ինչ հոգեբանական մեխանիզմներով է տեղի ունենում այդ ընդհանուր համայնքի պատկերի ձևավորման գործընթացը, և պատահական չէ, որ այս մոտեցումներում չեն քննարկվում *հիշողություն, ապրում* հիմնարար հասկացությունները: Ինքնության պրոցեսները և՛ անհատական (ինքնակենսագրական նարատիվներ), և՛ կոլեկտիվ (ազգային անցյալի, պատմության սիմվոլիկ կերտում, ազգային նարատիվներ) մակարդակներում սերտ կապ ունեն կոլեկտիվ հիշողության հասկացության հետ, որն, իր հերթին, դիտվում է ոչ թե որպես փաստագրված անցյալի մտաբերում և վերարտադրություն, այլ պարբերական նորովի ընթերցում, նոր ինքնության կառուցում [5, 7, 11]: Ինչպես անձնային նարատիվն է ապահովում անձի ինքնակենսագրական-ինքնագիտակցական հյուսքը և կյանքի տարբեր փուլերում կարող է վերապատմվել տարբեր կերպ, այնպես էլ ազգային ինքնությունը կարելի է դիտել որպես ազգի և պատկանելության մասին ամբողջական պատմությունների հյուսման, փոխանցման և վերափոխման գործընթաց:

Ազգային ինքնության խորհրդանշական համակարգը

Ազգային հանրույթը միշտ միտված է իր գոյությունը և սահմանները նաև սիմվոլիկ միջոցներով պահպանելուն: Ունեձգությունները խորհրդանշական համակարգի հանդեպ (օրինակ՝ դրոշի այրում կամ անգամ՝ ազգային կերակուրի վերագրում մեկ այլ ազգի) կարող են նույնքան իրական հուզական հակազդումներ առաջ բերել, որքան ֆիզիկական բնաջնջման իրական սպառնալիքը:

Է. Սփայտերը ձևակերպում է ժողովուրդը ոչ ավելի, ոչ պակաս, քան որպես *մարդկային անհատների որոշարկվող ամբողջություն, ովքեր հավատում են ինքնության խորհրդանշանների տվյալ համակարգին* [16]: Զ. Արմսթրոնգի համոզմամբ՝ սիմվոլները կարևոր են էթնիկ-ազգային ինքնության պահպանման համար՝ սահմանապահի պես տարբերակելով «մեզ» ու «նրանց», ընդ որում՝ սիմվոլները ֆունկցիոնալ են նաև այդ «ուրիշների» համար, քանի որ ապահովում են նրանց հետ սիմվոլիկ հաղորդակցումը: Նա գտնում է, որ միֆը, խորհրդանիշը և հաղորդակցումը էթնիկ ինքնության հիմնաքարերն են և դրա վերլուծության երեք հիմնական բաղադրիչներ [մեջբերված է ըստ 14]: Մ. Տիմոֆեևը ևս սեմիոտիկ կոնստրուկտիվիստական դիրքերից է դիտարկում ազգերի գոյության ֆենոմենը՝ ներմուծելով «նացիոսֆերա» (ազգություն) կոնցեպտը: Նա ազգային նույնականացումը ներկայացնում է որպես սեմիոտիկ և դիսկուրսիվ գործընթաց, իսկ ազգն այդ տեսանկյունից սահմանում որպես պոլիսեմանտիկ (բազմիմաստ) համակարգ: Նացիոսֆերան սոցիալական և նշանային այն տարածքն է, որտեղ իրականացվում է ազգային դիսկուրսը,

որի միջոցով տեղի են ունենում էթնիկության «ազգայնականացման» և ազգի «էթնիկացման» փոխհիսուված գործընթացները [29]: Նացիստների և սեմիտների ձևավորման մեջ նա առանձնացնում է տարբեր կարգի այնպիսի հատկանիշներ և գործընթացներ, ինչպիսիք են լեզուն/այբուբենը, ՁԼՄ-ն, անցյալի «ազգայնացումը» (национализация)՝ անցյալին ազգային արժեք հաղորդելու գործընթացը, ժամանակի ազգայնացումը, տարածքի ազգայնականացումը, բնության ազգայնացումը, առօրեականության ազգայնացումը, ազգի գույները, ազգի պերսոնիֆիկացիան (հերոսներ, հայտնի մարդիկ), դրոշը և այլն [նույն տեղում]:

Խորհրդանշական համակարգի մասին խոսելիս հարկ է հաշվի առնել, որ ազգը նաև կոմունիկատիվ կատեգորիա է՝ այլ ազգային սուբյեկտների հետ (սիմվոլիկ) փոխգործողության սուբյեկտ, և այս առումով խորհրդանիշները ոչ միայն *ինքնարտահայտման*, այլև *ինքնաներկայացման* տարրեր են: Այսպիսով, ազգային խորհրդանիշների նպատակն է մի կողմից՝ միավորել մարդկանց՝ ստեղծելով ազգի արժեքների, մարդկանց, նպատակների, պատմության և այլնի վիզուալ և խոսքային արտահայտումները, և մյուս կողմից՝ տարանջատել հանրույթն իր խորհրդանշական դաշտից դուրս գտնվող հանրություններին:

Ազգային ինքնության նոր ուսումնասիրություններում առաջ է քաշվում «սիմվոլիկ ռեսուրսներ» կոնստրուկտը: Հ. Հեյլը և Գ. Էբրուն միգրանտների մշակութային ինքնությանն անդրադառնալիս *սիմվոլիկ ռեսուրսները* դիտարկում են որպես միջոց, որոնցով ձևավորվում և պահպանվում են մշակութային ինքնությունները, հատկապես՝ ծագման երկրից դուրս գտնվելու պարագայում [8]: Դրանց նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն սոցիալական ռեսուրսների (մարդիկ, ինստիտուտներ), ինչպես նաև լեզվական ռեսուրսների, էմիգրանտներին դրանք ավելի հասանելի են: Համաձայն սիմվոլիկ ռեսուրսների նրանց ըմբռնման՝ անձն «ակտիվ սուբյեկտ է՝ շարունակաբար ներգրավված իր տեղակայման վայրերին անձնային իմաստ հաղորդելու մեջ» [նույն տեղում, էջ 398]:

Ազգային ինքնության հոգեբանական ըմբռնման հնարավորությունները

Էթնիկական ինքնության սահմանումը և ուսումնասիրման ուղղությունները հոգեբանության մեջ

Էթնիկ և ազգային հասկացությունները բուն հոգեբանական գրականությունում հաճախ կիրառվում են առանց հատուկ տարբերակման, թեև հետազոտությունները ստույգ իմաստով էթնիկականի դաշտում են:

Արևմուտքում ուսումնասիրությունները կատարվում են երկու հիմնական ոլորտներում՝ զարգացման և սոցիալական հոգեբանության: Տարածված հետազոտական թեմաներից մի քանիսն են. վաղ տարիքում էթնիկական նույնականության ձևավորումը (օրինակ՝ երկէթնիկ ամուսնությունից ծնված երեխաների մեջ կամ ներգաղթածների նոր սերնդում), էթնիկական ինքնության և մշակութային հարմարման փոխառնչությունն այլ երկիր ներգաղթած դպրոցականների մեջ, սեփական և այլ ազգերի վերաբերյալ կարծրատիպային պատկերացումները, էթնիկական ինքնության և սուբյեկտիվ բարեկեցության առնչությունն ազգային փոքրամասնություններկայացնող էթնիկ խմբերում և վերջապես՝ տարբեր գործոնների ազդեցությունն այն բանի վրա, թե ինչպես և ինչքանով կորսևորվի անձի էթնիկական ինքնությունը նրա մյուս ինքնությունների (անձնային, խմբային, մասնագիտական, գենդերային, կրոնական, ռասայական և այլն) հետ հարաբերակցության մեջ: Թվարկումն արդեն իսկ հուշում է, որ հետազոտական խնդիրները բխում են բազմազգ, ներգաղթի մեծ հոսքեր ընդունող երկրներում տիտղոսային ազգի և տարբեր փոքրամասնությունների միջև հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունից: Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները հիմնականում կառուցվում են կորեկացիոն դիզայնով և հիմնվում ինքնության ուսումնասիրման ամենաազդեցիկ ուղղություններից մեկի՝ սոցիալական ինքնության մոտեցման՝ վրա: Վերջինիս շրջանակներում էթնիկական ինքնությունը դիտվում է որպես յուրատեսակ սոցիալական ինքնություն, այս դեպքում՝ էթնիկ խմբի անդամ լինելուց բխող, որը պետք է նպաստի անձի ինքնագնահատականին [18, 10, 13]: Ըստ որում, էթնիկ ինքնության դրսևորման աստիճանը և ձևը փոփոխական են ժամանակի մեջ ու տարբեր տիպի իրավիճակներում: Երբեմն այն կարող է ընդգծվել, եթե ապահովվում է առավելության կամ յուրահատուկ լինելու զգացում այլազգիների հետ շփման մեջ, իսկ այլ իրավիճակներում, երբ հաղորդակցումը չի ակտիվացնում էթնիկական պատկանելության թեման կամ սպառնալիք չկա էթնիկական զգացմունքներին (օրինակ՝ մասնագիտական հաղորդակցում, հանդուրժողական միջավայր), այն կարող է երկրորդական լինել և չարտահայտվել: Ֆիննին [13], կատարելով էթնիկական ինքնության էմպիրիկ ուսումնասիրությունների, կոնցեպտուալ սահմանումների և չափողական սանդղակների մետավերլուծություն, մի քանի կարևոր ամփոփումներ է անում՝ առաջարկելով ավելի ամբողջական և բազմակողմ պատկերացում: Էթնիկական ինքնությունն ունի և՛ անձնա-

¹ Սոցիալական ինքնության և սոցիալական կատեգորիզացման՝ արդեն դասական դարձած տեսությունների հիմնարար դրույթներին կարելի է ծանոթանալ Հ. Թեջֆելի և Թերների հետևյալ աշխատություններում. Tajfel, H. (1981). *Human Groups and Social Categories*. Cambridge University Press, Cambridge; Turner, J. C. et al (1987). *Rediscovering the social group: A self-categorization theory*. Basil Blackwell.

յին, և՛ խմբային ինքնության հատկանիշներ: Այն բազմաչափ և դինամիկ կոնստրուկտ է, ունի մի շարք բաղադրիչներ. ինքնակատեգորիզացում, վարքային ներգրավում («էթնիկ պահվածք»), ներխմբային դրական դիրքորոշումներ, էթնիկական արժեքներ ու համոզմունքներ, էթնիկ խմբին պատկանելու կարևորություն, փոխկապվածություն ազգային ինքնության հետ:

Պատկերացումները համալրելու համար օգտակար են նաև ժամանակակից ռուսալեզու հեղինակների տեսակետներն էթնիկության և էթնիկական ինքնագիտակցության վերաբերյալ: Տ. Ստեֆանենկոն ընդգծում է, որ հոգեբանին էթնոսն առաջին հերթին հետաքրքրում է որպես հոգեբանական (ընդ)հանրություն, որի անդամներն ունեն էթնիկական ինքնագիտակցություն: Ինչպես և շատերը, նա էթնիկական ինքնության մեջ ընդգծում է պատկանելության սուբյեկտիվ իմաստը, սեփական անձը տվյալ էթնոսի անդամ գիտակցելու կոգնիտիվ-հուզական բովանդակությունը [28]: Մի շարք հեղինակներ էթնիկական ոլորտի վերաբերյալ ինֆորմացիոն տեսակետներ են արտահայտում: Այսպես, Ս. Դենիսովան էթնոսը սահմանում է որպես սուբստանցիոնալ համակարգ, որին բնորոշ են ինքնակազմակերպման և ինքնազարգացման հատկանիշները՝ հիմնված միջավայրին ադապտացիայի և ինֆորմացիոն կապերի վրա [23]: Ըստ Ս. Արությունովի՝ էթնոսները յուրատիպ մշակութային ինֆորմացիայի տարածապես սահմանափակված խտացումներ են, իսկ միջէթնիկական կոնտակտները՝ այդ տեղեկատվության փոխանակում [21]: էթնիկությունը, Վ. Լուրյեի պատկերավոր բնորոշմամբ, ունի «երկու հատակ». նրա հիմքում ընկած մշակույթը բաժանված է «ներքին»՝ օտարի համար փակ, և «արտաքին»՝ տեսանելի մշակույթների [25]: Ըստ էության, վերջին դիտարկումը կապված է կարևոր մեթոդաբանական և իմացաբանական խնդրի հետ. որքանով ենք մշակույթ, ազգ ճանաչում՝ միայն «դիտարկելին դիտարկելով»: Պատահական չէ, որ ներկայումս մի շարք հոգեբան ուսումնասիրողների [27, 12] ուշադրության առարկաներից մեկն էթնիկական ինքնության մեջ չգիտակցված, խորը շերտերի առկայությունն է:

Որոշակի էթնիկական խմբի պատկանելու զգացումը հոգեբանորեն էական է այն առումով, որ կապված է մարդու հիմնարար պահանջմունքներից մեկի, այն է՝ ակունքներ, շարունակականություն ունենալու պահանջմունքի հետ: Ազգայնական գաղափարախոսությունը հոգեվերլուծական դիրքերից դիտող Ռ. Քյոնիգսբերգն ավելի է ընդգծում արմատներ ունենալու պահանջմունքի հոգեբանական աղբյուրը և ազգերը համարում է սիմվոլիկ օբյեկտներ, որոնց հետ անհատները նույնականացվում են՝ խուսափելու իրենց վերջավոր գոյությունից: «Միայն սեփական անձի, ասել է

թե՛ կոնկրետ գոյության հետ նույնականությունը նշանակում է <...> նույնականացվել քայքայվող, անցավոր մարմնի հետ, որը ժամանակային է ու ժամանակավոր <...>: Մարդը նույնականանում է իր ազգի հետ, որպեսզի խուսափի իր մահկանացու մարմնից և անցավորությունից և տեղափոխվի մի ոլորտ, որն անմահ է թվում» [12, էջ 14]: Այս գաղափարը կարծես իռացիոնալ վերածնակերպումն է մշակույթի Վեբերյան ընկալման: Վեբերն այն դիտում էր որպես առանձին մարդկային կյանքերին անհիմաստությունից ու պատահականությունից պաշտպանող, անհիմաստ ունիվերսումում իմաստ հաղորդող:

Մենք-նրանք փարբերակումը որպես ազգային ինքնության կառուցման մեխանիզմ

Ինչպես հայտնի է, ինքնության կերտման գործընթացին զուգահեռ՝ միշտ կա Ուրիշի պատկեր: Դա օրինաչափ է նաև ազգային ինքնության համար: Ազգի ուսումնասիրության համար հիմնական հասկացություններն են սահմանը «մեր» ու «նրանց» միջև և ունիվերսալ, ընդհանրացված համեմատումն օտարի հետ: Մենք-նրանք հարաբերման կարևորությունը նշվում է ինքնության հոգեբանական, մշակութաբանական, քաղաքագիտական, ինչպես նաև փիլիսոփայական և միջբնագավառային վերլուծություններում [6, 14, 2, 9, 24]: Նորվեգ մարդաբան, ազգաբան Ֆ. Բարթը [2] էթնիկ հանրույթի ինքնագիտակցությունը համարում է *մշակութային փարբերության սոցիալական կազմակերպման* արդյունք և շեշտում է *սահմանի* հասկացությունն ու դրա պահպանման գործընթացների կարևորությունը: Ֆ. Բարթի մոտեցումը լիարժեք հասկանալու համար կարևոր է իմանալ, որ էթնոտարբերակման համար «ընտրված» հատկանիշները նա համարում էր ոչ թե ի սկզբանե տրված, անփոփոխ, այլ իրադրական՝ որոշակի պատմական, քաղաքական և տնտեսական իրադրությունների ներքո ձևավորվող [նույն տեղում]: Էթնոտարբերակումը միանգամայն ընտրողական գործընթաց է, և այդ նպատակով կարող է կիրառվել մշակույթի կամայական, նույնիսկ ոչ յուրահատուկ (նաև այլ մշակույթներին բնորոշ) տարր: Ինչպես Տ. Ստեֆանսենկոն է նշում, սոցիալական հոգեբանի տեսանկյունից այնքան էական չէ, թե ինչ բնութագրերի հիման վրա է տեղի ունենում էթնոտարբերակումը [28]: Որպես էթնոտարբերակիչ կարող են ընտրվել մշակույթի զանազան արտաքին և ներքին ատրիբուտներ (արժեքներ, նախշեր, գույն, լեզու, խոհանոց ևն), և դրանք կարող են փոփոխվել [8, 26, 28]: Այս առումով ապարդյուն են խոհանոցի և այլ էմբլեմների «հեղինակային իրավունքի» շուրջ կովկասյան մրցակցությունները: Էթնիկ ինքնության վերաբերյալ որոշ հեղինակներ հակված են ծայրահեղացնել և էութենականացնել մենք-նրանք սահմանազատման

Ֆենոմենը՝ համարելով այն հիմնարար և կայուն: Օրինակ, Ռ. Քյունիգսբերգը ազգը դիտում է որպես հավաքական նարցիսիստական էգոյի սիմվոլիկ մարմնավորում, որը մաքրագործված է «վատից» ու վատերից, իդեալականացված է, և այդ նպատակով վատը, սխալը պետք է լինի թշնամին [12]: Վ. Ֆոլկանը գտնում է, որ թշնամիներ ու դաշնակիցներ ունենալը հանրություններին բնորոշ է պահանջմունքի մակարդակում, և արագ ընդհանրացում է անում՝ թշնամի ունենալու և դրա կերպարի ստեղծման անհրաժեշտությամբ բացատրելով հայ-ադրբեջանական կոնֆլիկտը [20]: Միևնույն ժամանակ, այսպիսի ծայրահեղ պնդումները՝ էմպիրիկ հետազոտություններով չհավաստված, մասնագիտական հանրության մեջ լայն ընդունում չեն ստանում: Փոխարենը, էմպիրիկ լայնածավալ բազայի վրա հենվող՝ սոցիալական ինքնության մոտեցման կողմնակիցները [10, 19, 18] կենտրոնանում են համատեքստային գործոնների վրա, որոնք ազդում են էթնիկական ինքնության ակտիվացման ու մենքնրանք (այս տեսության շրջանակներում՝ *ingroup* և *outgroup*) տարբերակման վրա: Որոշ դեպքերում որպես *ingroup* («ներխումբ», պատկանելության խումբ) կարող է ընդգծվել սեփական էթնոսը, մեկ այլ դեպքում՝ քաղաքացիական կամ որևէ այլ կոլեկտիվ ինքնություն: Մոտիվացիայի և էթնիկ ինքնության կապի մասին մի հետազոտության մեջ հեղինակները ցույց են տալիս, որ էթնիկ խմբի հետ անձի նույնականացումը կախված է բնակության երկրում նրանց առջև դրված սոցիալական սպասումներից. եթե նրա մեջ մեծ է ասիմիլացվելու ճնշման զգացողությունը, արդյունքում կարող է «հաղթող» լինել բնակության երկրի հետ նույնականության զգացումը՝ անգամ պահպանողական արժեքներ դրսևորելու հետ մեկտեղ [17]: Մ.Վերկայտենը երկու, թվում է՝ հակասական պնդումների պատկերավոր օրինակ է բերում, որոնց հեղինակը Նիդեռլանդներում ապրող միևնույն թուրք դեռահասն է: Մի դեպքում, երբ դասարանում քննարկվում են մշակութային բազմազանության ու խտրականության հարցերը, տղան ընդգծում է իր թուրքական ինքնությունը և դրա կարևորությունն իր համար: Մեկ այլ իրավիճակում, երբ նա հոլանդացի ընկերների հետ քննարկում է իր ապագայի պլաններն այդ երկրում, նա նշում է, որ գրեթե ողջ կյանքն այդտեղ է ապրում և իրեն այդ երկրում է պատկերացնում, թուրքերեն հազիվ է խոսում, մզկիթ չի հաճախում, ու կարելի է ասել՝ «ավելի շատ հոլանդացի է, քան թուրք» [18, էջ 182]: Նշված գործոնները հարկ է հաշվի առնել նաև հայկական ինքնության խնդիրները քննարկելիս: Էթնիկ ընդհանրության գաղափարի վրա հիմնվելով՝ օրինաչափ է թվում, որ կամայական երկու հայ պետք է փոխադարձ դիրքորոշված լինեն «մենքի» զգացումով, գտնվեն «մենքի» տարածքում: Սակայն սա

ինքնըստինքյան հասկանալի չէ: Սահմաններ կան ինչպես միջէթնիկական մակարդակում, այնպես էլ նույն ազգի տարբեր սոցիալ-մշակութային ու տնտեսական խմբերի միջև: Այդպիսով, հայ երիտասարդը կարող է ընդհանրություն զգալ իրեն արժեքիմաստային դաշտով ավելի մոտ այլազգիի հետ, և հակառակը՝ կոնկրետ շփման ժամանակ օտարություն զգալ հայրենակցի հանդեպ: Իհարկե, միևնույն էթնիկ պատկանելությունը մնում է էական ընդհանրություն, բայց ոչ՝ բնական և անփոփոխ էություն:

Անձ և ազգ առնչությունները

Ազգային ինքնությունը ոչ միայն սոցիալական, այլև անձի հոգեբանության դաշտում է: Ազգային ինքնությունը կապված է անձի արժեքիմաստային ոլորտի [18, 17], անձի սուբյեկտիվ բարեկեցության [10, 17], ինչպես նաև անձի հոգեբանական անվտանգության հետ: Ազգն էական դեր է խաղում անձի կյանքում՝ որպես կոլեկտիվ ինքնության ձև նպաստելով կամ խոչընդոտելով նրա դրական ինքնագնահատականի ձևավորմանը: Դրական ազգային նույնականացման դեպքում անձն ավելի մեծ պոտենցիալ ունի ակտիվորեն գործելու ազգային խմբի անունից, և սեփական ազգի ու պետության մասին պատկերացումներից էապես կախված է քաղաքացիների առօրեական վարքը: Բավական է տեսնել, թե որքան հաճախ է անհատն իրեն լիարժեք զգալու խնդիրներ ունենում հենց ազգային խնդիրների բերումով (փոքրամասնության կարգավիճակ, սեփական երկրում մնալու կամ այն լքելու երկրնտրանքի հետ կապված ապրումներ և այլն): Ազգ և անձ առնչությունը հասկանալուն օգնում է նաև լեզվական վերլուծությունը, որտեղ բացահայտվում է այդ բառերի բնական զուգահեռությունը: Հ. Աճառյանն առաջ է քաշում այս երկու բառերի հնարավոր ընդհանուր ստուգաբանում՝ ներկայացնելով դրանք որպես կորելյատներ՝ կրկնակ-բառեր (*անձ*՝ մասնավոր և *ազն*՝ ընդհանուր իմաստներով)² և դրանով իսկ մատնանշելով հոգու անհատական և ազգային հարթությունների փոխկապակցվածությունը: Այլ վերլուծական ճանապարհով այս կապին է հանգում Հոֆսթեդեն, երբ նշում է, որ մշակույթը մարդկային հանրության համար նույնն է, ինչ անձն անհատի համար:

Այժմ ներկայացնենք մի քանի հիմնական ամփոփումներ:

Էթնիկական ինքնությունը կոլեկտիվ ինքնության ձև է, որը ներառում է անձի՝ իրեն որպես տվյալ էթնիկական խմբի անդամ գիտակցելու և այլ էթնիկական խմբերից առանձնանալու հետ կապված հուզական, ճանաչողական և վարքային-դրդապատճառային ասպեկտներ, ինչպես նաև «սպասարկում» է արժատներ ունենալու և պատկանելության պահանջումները:

² Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Հ.1-4, Եր., Երևանի համալս. հրատ, 1973:

Էթնիկ ինքնության նկատելի տարր է մենք-ի բացառիկության ընկալումը՝ հիմնված սոցիալականացման ընթացքում յուրացված ազգային-պատմական նարատիվների, ինչպես նաև էթնոտարբերակման վրա:

Էթնիկական ինքնությունը համեմատաբար կայուն համակարգ է, թեպետ կարող է ձևափոխումների ենթարկվել անսպասելի ցնցումների, իրադարձությունների հետևանքով, հարմարվել նոր ժամանակին և միջավայրին: Էմպիրիկ հոգեբանության լեզվով ասած՝ այն կախյալ փոփոխական է: Իրադրության տիպից կախված՝ էթնիկ պատկանելության սուբյեկտիվ արժեքը կարող է աճել կամ նվազել: Այն նաև հարաբերվում է անձի մյուս՝ անձնային, սոցիալ-դերային ինքնությունների հետ, ուստի տարբեր իրավիճակներում այն ունի տարբեր համեմատական կարևորություն ու արտահայտվածություն:

Էթնիկական ինքնությունն ունի հուզական-նորմատիվ բնույթ, ընդ որում՝ էթնիկ հանրության հետ խորը հուզական կապերը և նրա հանդեպ բարոյական պարտավորությունները ձևավորվում են սոցիալականացման ընթացքում:

Ազգային ինքնությունը, կարելի է ասել, հիմնված է երկու սահմանումների միասնության վրա.

(ա) դրական (բովանդակային) սահմանում կամ մենք-սահմանում (Ով ենք մենք). Ազգային ինքնությունը ենթադրում է որոշակի բովանդակություն, որը կիսում են դրա անդամները, ինչը կարող է ներառել հիշողություն, խորհրդանիշներ, արժեքներ, գաղափարախոսություն, սոցիալական ինստիտուտներ, տարածք և այլն: Սրանցով, ըստ էության, ինքնաձևակերպվում է *մենք*-ը:

(բ) բացասական սահմանում (Ով չենք մենք, Ովքեր են նրանք). Ազգային ինքնության կառուցումը և պահպանումը ենթադրում է պատկերացումներ «ընդհանրացված ուրիշների» և նրանցից տարբեր լինելու, այդ տարբերությունների բնույթի մասին: Չնայած այդ տարբերությունը սուբյեկտիվորեն պատկերացվող և հաճախ իրապես գոյություն չունեցող տարբերություն է՝ հիմնված կարծրատիպային պատկերացումների վրա, այն կարող է միանգամայն իրական գործոն լինել այլազգիների հետ շփումներում:

Ազգային ինքնության ամբողջական ըմբռնմանը ծառայում, բայց չեն փոխարինում էթնիկական ինքնության հետազոտությունները: Ազգային ինքնության պետական-քաղաքացիական ասպեկտները մնում են ուսումնասիրության բաց և արդիական դաշտ հոգեբանների համար: Փոքրաթիվ են հոգեբանական հետազոտություններն այն մեխանիզմների վերաբերյալ, որոնցով անհատները կապվում են ազգ-պետությանը՝ իրենց զգալով

կամ օտարվելով որպես քաղաքացի: Փոքրաթիվ են նաև միջբնագավառային հետազոտությունները՝ հոգեբանության մասնակցությամբ: Ներկայումս ազգային ինքնության հոգեբանական ուսումնասիրման տեսամեթոդաբանական հնարավորությունները լիարժեք չեն օգտագործվում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Anderson, B.** *Imagined Communities. Reflections on the origin and spread of nationalism*, London, Verso, 1991.
2. **Barth, F.** *Ethnic groups and boundaries. The social organization of culture difference*, Oslo: Universitaetsforlaget. 1969.
3. **Benwell, B., Stokoe, E.** (eds), *Discourse and Identity*, Edinburgh University Press, 2006.
4. **Bolz, P.** *Ethnische Identität und kultureller Widerstand*, Frankfurt, Campus Verlag, 1986.
5. **Bruner, J.** *Acts of meaning: Four Lectures on Mind and Culture*, Harvard, HUP, 1992.
6. **Duszak, A.** (ed) *Us and Others. Social identities across languages, discourses and cultures*. Amsterdam, John Benjamins Publishing, 2002.
7. **Feldman, F.** Narratives of national identity as group narratives, in J. Brockmeier & D. Carbaugh (eds), *Narrative and Identity. Studies in Autobiography, Self and Culture*, Amsterdam, Philadelphia: John Benjamins, 2001, pp. 129-143.
8. **Hale, H., Abreu, G.** Drawing on the Notion of Symbolic Resources in Exploring the Development of Cultural Identities in Immigrant Transitions, *Culture and Psychology*, N 16, 2010, pp. 395-415.
9. **Hall, S.** New ethnicities. Stuart Hall: Critical dialogues in cultural studies, London, 1996, pp. 441-49.
10. **Haslam, A., Jetten, J., Postmes, T., Haslam, C.** Social identity, health and well-being: an emerging agenda for applied psychology. *Applied Psychology*, N 58(1), 2009, pp. 1-23.
11. **Hinchman, P., Hinchman, S.** (eds), *Memory, Identity, Community: The Idea of Narrative in the Human Sciences*, Albany: State Univ. of NY Press, 1997.
12. **Koenigsberg, R.** *Nations are immortal bodies, 2006*. Հասանելի է <http://www.library-ofsocialscience.com/ideologies/docs/rk-nationsimmortal.html>
13. **Phinney, S., Ong, D.** Conceptualization and measurement of ethnic identity: Current status and future directions. *Journal of Counseling Psychology*, N 54(3), 2007, pp. 271-281.
14. **Pohl, W., Reimitz, H.** (eds), *Strategies of distinction: the construction of ethnic communities*, Leiden, Brill, 1998, 347.
15. **Shulman, S.** Challenging the Civic. Ethnic and West. East Dichotomies in the Study of Nationalism, *Comparative Political Studies*, N 35/5, 2002, pp. 554-585.
16. **Spicer, E.** Persistent Cultural Systems, *Science*, 174 (4011), 1971, pp. 795-800.
17. **Tartakovsky, E., Schwartz, S.** Motivation for emigration, values, well-being, and identification among young Russian Jews, *International Journal of Psychology*, N 36, 2001, pp. 88-99.
18. **Verkuyten, M.** *The Social Psychology of Ethnic Identity*, UK, Psychology Press, 2005.
19. **Verkuyten, M., De Wolf, A.** Being, feeling and doing: Discourses and ethnic self-definitions among minority group members, *Culture & Psychology*, N 8, 2002, pp. 371-399.
20. **Volkan, V.** *The need to have enemies and allies. From clinical practice to international relations*. US, Jason Aronson Pub, 1994.
21. **Арутюнов, С.А.** *Народы и культуры. Развитие и взаимодействие*, Москва, Наука, 1989.

22. **Бунаков, Ю., Лукин, Н.** Национализм и национальная идентичность в условиях глобализации: проблемы концептуализации, *«Credo New» теоретический журнал*, 2006. N 1. Ссылка: <http://credonew.ru/content/view/553/58>
23. **Денисова, С.** *Социальная субъектность этноса (концептуальный подход)*, Москва, Изд-во Рост. пед. ун-та, 1997.
24. **Заковоротная, В.** *Идентичность человека. Социально-философские аспекты*, Ростов-на-Дону, СКНЦ ВШ, 1999.
25. **Лурье, В.** *Метаморфозы традиционного сознания*, СПб, Тип. им. Котлякова, 1995.
26. **Малахов, С.** Символическое производство этничности и конфликт, *Язык и этнический конфликт*, Москва, Гендальф, 2001, с. 115-137.
27. **Солдатова, Г.** Этническая идентичность. *Психология самосознания*, Хрестоматия, Самара, Бахрах, М., 2000, с. 656-667.
28. **Стефаненко, Т.** *Социально-психологические аспекты изучения этнической идентичности*, 1999. Ссылка: <http://flogiston.ru/articles/social/ethnic>
29. **Тимофеев, М.** *Нациосфера: опыт анализа семиосферы наций*, Иваново, Иван. гос. Ун-т, 2005, 279 с.
30. **Хобсбаум, Э.** Все ли языки равны? Язык, культура и национальная идентичность, *Логос*, N 4(49), 2005. Ссылка: <http://www.ruthenia.ru/logos/number/49/02.pdf>